ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԾՊ - 113/ 2024 թ.

« 15 » 08 2024թ.

ք.Երևան
վայրը

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնքապետարան
կազմակերպության անվանումը

(այսուհետ՝Պատվիրատու) ի դեմս **համայնքի ղեկավար՝ Ա.Ներսիսյան** որը գործում է
ազգանունը, անունը, պաշտոնը

Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ

(այսուհետ՝ Կատարող) ի դեմս **գլխավոր տնօրեն՝ Ա.Գյուլխասյան**
ազգանունը, անունը, պաշտոնը

որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի հիման վրա մատուցել **«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ փակ. №1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ», « ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 17-րդ փողոց №2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի 1-ին փողոց №10 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացություններ**: (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց:

1.2. Յուրաքանչյուր հայտով մատուցված Ծառայությունների ծավալները (ծրագիրը) և գինը, ինչպես նաև մատուցման ժամկետները սահմանվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հանձնման-ընդունման արձանագրությունով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.1.2. Մինչև սույն պայմանագրով սահմանված կարգով Ծառայությունների ընդունման-հանձնման ակտի ստորագրումը՝ ոչ ուշ քան 30 օր առաջ ծանուցելով Կատարողին՝ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով հավելվածով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

2.1.3. Առանց Ծառայությունների դիմաց վարձատրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողը

ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը, մեկ և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի հավելվածներով սահմանված Ծառայությունների մատուցման ժամկետը կամ եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրի հավելվածներով սահմանված պահանջներին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Վճարել մատուցված Ծառայությունների դիմաց սույն պայմանագրով և պայմանագրի հավելվածներով նախատեսված չափերով և կարգով:

2.2.2. Սույն պայմանագրով սահմանված կարգով կազմակերպել մատուցված Ծառայությունների ընդունումը-հանձնումը:

2.3. Կատարողը իրավունք ունի՝

2.3.1. Սույն պայմանագրի հավելվածներով նախատեսված ժամկետում Ծառայությունները մատուցելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու հավելվածներով նախատեսված վճարման ենթակա գումարը:

2.3.2. Մինչև Ծառայությունների մատուցման ավարտը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիտաուից պահանջել վճարելու մինչև սույն պայմանգրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը մատուցված Ծառայությունների համարժեք գինը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, պատշաճ որակով, յուրաքանչյուր հավելվածով սահմանված ժամկետում և ծավալով և պատասխանատվություն կրել մատուցված Ծառայությունների որակի համար:

2.4.2. Պատվիրատուին ներկայացնել հետազոտությունների եզրակացությունները՝ մինչև մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրումը և հաստատումը:

2.4.3. Պատասխանատվություն կրել Ծառայությունների մատուցման արդյունքում կազմած եզրակացությունների մեջ անճշտությունների, սխալների և այլ թերությունների համար՝ Պատվիրատուի ընտրությամբ՝ անհատույց վերացնելով հայտնաբերված թերությունները կամ վերադարձնելով Ծառայությունների մատուցման համար վճարված գնի մասը կամ հատուցելով Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը՝ հատուցելով դրա հետևանքով Պատվիրատուի կրած վնասները:

2.4.4. Հրահանգավորել Ծառայությունների մատուցումը Պատվիրատուի տարածքում գտնվող Կատարողի անձնակազմին՝ անվտանգության կանոնների և դրան վերաբերվող այլ նորմերի վերաբերյալ, հաշվի առնելով տվյալ բնագավառում իրականացվող աշխատանքների յուրահատկությունը, ապահովելով Պատվիրատուի ներքին կարգապահության և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը:

3. Ծառայությունների ընդունման-հանձման կարգը

3.1. Յուրաքանչյուր հավելվածով մատուցված Ծառայությունների վերաբերյալ Կատարողը ներկայացնում է Պատվիրատուին ընդունման-հանձնման ակտ:

3.2. Ակտում նշվում է՝

- Մատուցված Ծառայությունների անվանումը,
- Ծառայությունների ընդհանուր արժեքը,
- Հետազննության վերաբերյալ եզրակացությունների ցանկը:

Ակտում կարող է ներառվել ցանկացած այլ տեղեկություն, որի մասին կողմերը անհրաժեշտ կհամարեն նշել:

3.3. Ծառայությունները համարվում են մատուցված հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրման և հաստատման պահից:

4. Ծառայությունների վճարման չափը և կարգը

4.1. Սույն պայմանագրով կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է **160.000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ,** ներառյալ հարկերը: Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարները: Գնի հաշվարկը կցվում է հավելվածում:

4.2. Հավելվածներով սահմանված գները ներառում են Կատարողի՝ սույն պայմանագրի և հավելվածների պարտավորությունների կատարման հետ կապված բոլոր ծախսերը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով, ինչպես նաև հավելվածներով նախատեսված Ծառայությունների որակի և ժամկետի պահպանման համար:

5.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի հավելվածներով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել տույժի վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար համապատասխան հավելվածով սահմանված Ծառայության գնի 0,1 տոկոսի չափով:

5.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված վճարման ժամկետների խախտման դեպքում Կատարողը իրավունք ունի Պատվիրատուից պահանջել տույժի վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարման ենթական գումարի 0,1 տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրով չնախաատեսված դեպքերում կողմերը իրենց պարտականությունները չկատարելու դեպքում կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5. Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտականությունները կատարելու:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերի և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **30.08.2024թ.:**

7.2. Սույն պայմանագրում փոփոխությունները և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ համաձայնագրի տեսքով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող	***Պատվիրատու***
ՀՀ Լոռի Բերդ համայնքապետարան	**«ՔՇՓԿ» ԲԲԸ**
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7	ՀՀ ք.Երևան, Ա.Ահարոնյան 3
ՀՀ Ֆին. Նախարարության	«Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Զեյթուն» մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 1930046300600100
Հ/Հ 900252000105	ՀԿՀՀ 00007335
ՀԿՀՀ 06954163	
Համայնքի ղեկավար՝	**Գլխավոր տնօրեն՝**
Ա.Ներսիսյան	**Ա.Գյուլխասյան**
ստորագրություն	ստորագրություն

Կ.Տ

Հավելված № 1
ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնքապետարանի և «ՔԾՓԿ» ԲԲ Ընկերության միջև **«15»** **օգոստոս** **2024թ.**
կնքված **ՆԾՊ-113/2024** պայմանագրի

Պայմանագրի շրջանակներում Կատարողը պարտավորվում է **« 15 » օգոստոս** **2024թ.** մինչև **« 30 » օգոստոս** **2024թ.** ընկած ժամանակահատվածում կատարել հետևյալ աշխատանքները, իսկ Պատվիրատուն՝ սահմանված ժամկետում վճարել կատարված աշխատանքների դիմաց:

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (ներառյալ հարկերը) ՀՀ դրամ	Կանխավճարի գումարը	Կանխավճարի գումարի վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)	Վերջնական վճարման ենթակա գումարը	Վերջնական վճարման ենթակա գումարի վճարման ժամկետը
1	2	3	4	5	6	7
«ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 1-ին փողոց 2-րդ փակ. №1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ», « ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 17-րդ փողոց №2 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրի 1-ին փողոց №10 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ» եզրակացությունների կազմում և տրամադրում:	**15.08.2024** **30.08.2024**	**160.000**		սույն հավելվածի կնքնման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում	**160.000**	ընդունման-հանձնման ակտի ստորագրման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում

Հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը հաշվարկվում է կանխավճարի գումարը Կատարողի հաշվին փոխանցելու օրվանից:
Վերը սահմանված գինը ներառում է Կատարողի՝ պայմանագրով և սույն հավելվածով ամրագրված պարտավորությունների կատարման հետ կապված բոլոր ծախսերը:

Կատարող

ՀՀ Լոռի Բերդ համայնքապետարան
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
ՀՀ Ֆին. Նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900252000105
ՀՎՀՀ 06954163

Համայնքի ղեկավար՝

_____ **Ա.Ներսիսյան**
ստորագրություն

Պատվիրատու

«ՔԾՓԿ» ԲԲԸ
ՀՀ ք.Երևան, Ա.Սիարոնյան 3
«Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Զեյթուն» մ/ճ
Հ/Հ 1930046300600100
ՀՎՀՀ 00007335

Գլխավոր տնօրեն՝

_____ **Ա.Գյուլխասյան**
ստորագրություն

Կ.Տ